

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

(Ճառ Պ. ԵՐՈՒԱՆԴ ՍՐՄԱՔԷՇԻՄԱՆԼԵԱՆԻԻ)

Այսօր քաղցր առիթը կ'ընծայուի ինձ խօսելու գաւառական գրականութեան եւ անոր հազուագիւտ ներկայացուցիչներէն մէկուն վրայ: Մեզի համար գաւառացի գրագէտը ինքնատիպ անձ մըն է, վասնզի գաւառը երանելի աշխարհն է ամէն տարաբնակ հայու համար. անիկա սրբազան բան մը ունի իր մէջ: Անիկա ոչ միայն մեր մտքին, այլ մեր սրտին, նամանաւանդ մեր զգայնութեանը վրայ կը զօրէ խորապէս: Անոր առջեւ մենք տկար ենք, տկար՝ բառին ազնուագոյն իմաստովը: Գաւառէն բերուած քարի կտոր մը զգլխիչ յիշատակ մըն է, հողի գուղձ մը՝ նուիրական յուռույթ մը. ծաղիկ մը, պտուղ մը կը փղձկեցնեն եւ հառաչել կուտան մեզ. կը յուզուինք, կը սարսուռանք անոնց տեսքին առջեւ՝ այնքան սովորական սակայն. գաւառը հեռաւոր ու խորհրդաւոր աշխարհն է, որուն կը ձգտին բոլոր մեր ըղձանքները, բոլոր մեր իտելալները: Գաւառին երգը ամէնէն քաղցրն է, հոգեցունցն է մեզի համար, իր էն նախնական ու պարզ ձեւին մէջ իսկ: Իսկ երբ գրականութիւնն է որ անկէ կուգայ մեզի, մեր հիացումը չափ չունենար, մանաւանդ երբ ան կը յատկանշուի այնպիսի այլազան, ինքնադրոշմ ու բարձր ձեւով մը, որպիսին է Զարդարեանի գրականութիւնը:

Եթէ չեմ սխալիք, մինչեւ իննսունական թուականը, ազգային դպրութեան մենաշնորհը հայրենի երկրէն դուրս հայ կեդրոններու տարամերձիկ մենաշնորհը նկատուեցաւ: Վենետիկ, Պոլիս, քիչ մըն ալ Իզմիր կը սոնքային իբրեւ արդիւանաւորիչ արտերը տոհմիկ գրականութեան: Գաւառը ամուլ գետինն էր, ցանցառ ու վատուժ գրականութեամբ: Յեղին միտքը բնավայրին վրայ չէր ընձիւղէր, չէր ուռճանար: Ազգային հանճարին սերմերը, օտար հողերու վրայ փոխադրուած, հազուադէպ օղբնտելութեան մը